



«ՔԱՅԼ ԱՌ ՔԱՅԼ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

«ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ
ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳԻՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝	Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում:
Դաստիարակ՝	Գրիգորյան Արաքսյա Հայկի
Մանկապարտեզ՝	Գյումրու «Լապտերիկ մսուր- մանկապարտեզ» ՀՈԱԿ

Գյումրի 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
ԳԼՈՒԽ 1	
ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ	
ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ	
1.1 Նախաթվային հասկացություններ	5
1.2 Թվային հասկացություններ	6
ԳԼՈՒԽ 2	
ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ	
ՄԵԹՈԴՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ	
2.1 Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ մաթեմատիկական	
պատկերացումների ձևավորման մեթոդները.....	7
2.2 Մաթեմատիկական պատկերացումների ձևավորման մեթոդներ.....	8
2.3 Մաթեմատիկական պատկերացումների ձևավորումը	
գործունեության բոլոր ձևերում.....	9
Գործնական դաս-պարապմունք.....	10
Եզրակացություն.....	15
Գրականության ցանկ	16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի արդիականությունը: Հետազոտությունն արդիական է քանզի, նախակրթարանի մաթեմատիկական գիտելիքները երեխայի մտավոր զարգացման մեջ անմիջականորեն կարևոր դեր են խաղում: Մաթեմատիկական գիտելիքների շնորհիվ երեխաները սովորում են՝ վերլուծել, համեմատել, սինթեզել, կատարել հաշվարկային գործողություններ, տրամաբանորեն մտածել, տարբերակել երկրաչափական պատկերները, կողմնորոշվել տարածության մեջ:

Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ զարգանում է հիշողությունը, ուշադրությունը, մտածողությունը: Մանկապարտեզում ստացած գիտելիքները երեխաները կիրառում են առօրյա կյանքում: Այդ պատճառով էլ մանկավարժի խնդիրն է՝ երեխաների մոտ հետաքրքրություն առաջացնել կրթական գործունեության նկատմամբ, տալ անհրաժեշտ տարրական մաթեմատիկական գիտելիքներ, երեխաներին սովորեցնել ինքնուրույն պատասխաններ և լուծումներ փնտրել:

Աշխատանքի նպատակը: Հետազոտական աշխատանքի նպատակն է ուսումնասիրել և վերլուծել տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում, քանի որ նախադպրոցական տարիքը ամենակարևոր շրջանն է անձի կայացման և զարգացման համար, այն կախված է երեխային շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից, դրանք են ընտանիք, մանկապարտեզ, ընկերներ:

Աշխատանքի հիմնական նպատակն է նախադպրոցական տարիքի երեխաների մոտ զարգացնել երեխայի մաթեմատիկական ունակությունները, ինքնուրույնությունը, տրամաբանությունը, ամրապնդել երեխայի հիշողությունը, կատարելագործել երևակայությունը:

Այս ամենն իրագործելու ամենարդյունավետ ձևը խաղն է, խաղի ժամանակ անհրաժեշտ է, որ դաստիարակը կատարի խաղընկերոջ դերը:

Աշխատանքի նպատակից բխող խնդիրները: Նախադպրոցական տարիքում երեխային մաթեմատիկական պատկերացումներ փոխանցելու գործընթացն ունի իր խնդիրները: Այդ տարիքում յուրաքանչյուր երեխա իր չափով է ներգրավվում գործընթացի մեջ: Յուրաքանչյուրի մոտ մաթեմատիկական պատկերացումներն

առանձնանում են իրենց առանձնահատկություններով: Ելնելով այս հանգամանքներից հետագոտության կատարման արդյունքում ակնկալում ենք հաղթահարել հետևյալ խնդիրները՝

- տարբեր գործնական աշխատանքների իրականացում,
- դիդակտիկ նյութի լայն օգտագործում,
- հաշվի հմտությունների մշակում, չափում և հաշվարկում ամենատարրական ձևով,
- ձևավորված պատկերացումների, յուրացված գործողությունների լայն կիրառում: Այսպիսով՝ այս ամենի կատարման արդյունքում, կկարողանանք նախադպրոցականին նախապատրաստել դպրոցին սովորեցնելով հաշվել, չափել, համեմատել, տարրական մաթեմատիկական գործողություններ կատարել, բացահայտել շրջապատող առարկաների մեծությունը, հատկանիշերը, նպաստել հոգեկան գործըթացների և հատկապես մտածողության (համեմատություն, վերլուծություն, ընդհանրացում) զարգացմանը:

ԳԼՈՒԽ 1

ՏԱՐՐԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում ունի հիմնական հետևյալ նպատակը. Նախադպրոցականին նախապատրաստել դպրոցին սովորեցնելով հաշվել, չափել, համեմատել, տարրական մաթեմատիկական գործողություններ կատարել, բացահայտել շրջապատող առարկաների մեծության հատկանիշերը, երկրաչափական պատկաները, նպաստել հոգեկան գործըթացների և հատկապես մտածողության (համեմատություն, վերլուծություն, ընդհանրացում) զարգացմանը: Նախադպրոցական տարիքում տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորումը ներառում է ծրագրային երկու հիմնական խնդիր. նախաթվային կամ մինչթվային և թվային կամ քանակական:

1.1 Նախաթվային հասկացություններ

1. Մեծություն

- Համեմատել առարկաները մեծության հատկանիշներով, խմբավորել՝ ըստ երկարության. երկար կարճ, հավասար, անհավասար (հավասար են երկարությամբ),
- բարձրության. բարձր-ցածր, հավասար-անհավասար (հավասար են բարձրությամբ),
- լայնության. Լայն-նեղ, հավասար-անհավասար (հավասար են լայնությամբ),
- հաստություն. հաստ-բարակ, հավասար-անհավասար (հավասար են հաստությամբ),
- չափի. մեծ-փոքր, հավասար-անհավասար (հավասար են մեծությամբ):

2. Ձև

- Ճանաչել երկրաչափական պատկերները նրանց բնորոշ հատկանիշները (շրջան, քառակուսի, եռանկյուն, ուղղանկյուն):
- Ճանաչել երկրաչափական մարմինները, նրանց բնորոշ հատկանիշներ (խորանարդ, գունդ):

- Շրջապատում տեսնել երկրաչափական պատկերների նման առարկաներ:

3.Տարածական և ժամանակային կողմնորոշում

- Տարբերակել տարածական ուղղությունները՝ աջ, ձախ, դուրս, ներս, տակ, վրա, վերև, ներքև, առաջ, հետ, հեռու, մոտիկ:
- Շարժվել նշված ուղղությամբ:
- Կողմնորոշվել թղթի և նկարների վրա:
- Տարբերել օրերը (այսօր, վաղը, երեկ), օրվա մասերը (առավոտ, կեսօր, երեկո), շաբաթվա օրերի հաջորդականությունը:

1.2 Թվային հասկացություններ

- Կատարել ուղիղ և հետընթաց համրանք 10-ի սահմաններում:
- Պատասխանել քանի՞, որքա՞ն, իչքա՞ն հարցերին:
- Տարբերել 1-10 սահմանում յուրաքանչյուր թվին նախորդ և հաջորդ թվերը:
- Հասկանալ թվի անկախությունն առարկաների ձևից, գույնից, տեսակից: Մեծությունից, գրված դիրքից, տարածությունից և հաշվելու ուղղությունից:
- Ճանաչել 1-10 տպագիր և ձեռագիր թվանշանները:
- Տարբերակել թվի կազմության տեսակները:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորմանն ու զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպման հիմնական ձևը պարապունքն է, բայց գործընթացը շարունակվում է:

Ուսուցման կազմակերպման ձևերից առանձնացվում են նաև մաթեմատիկական բնույթի դիդակտիկ խաղերը, խաղ-մրցույթները, խաղ-առաջադրանքները:¹

Մաթեմատիկայի ուսուցումն անհրաժեշտ է երեխային փոքր տարիքից, այն պետք է կիրառել գործունեության բոլոր ձևերում: Ուսուցման հաջող յուրացմանը հասնելու համար պետք է օգտագործել տարբեր մեթոդներ՝ ելնելով երեխայի տարիքից և ուսուցանվող նյութի բովանդակությունից: Նախադրոցական տարիքում ուսուցումը սկսվում, ծավալվում և կայանում է խաղի ընթացքում:

¹ <http://www.deti7ya.ru/>

ԳԼՈՒԽ 2

ՏԱՐԲԱԿԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

2.1 Նախադպրոցական տարիքի երեխաների մոտ մաթեմատիկական պատկերացումների ձևավորման մեթոդները

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման մեջ առաջատար դեր է խաղում գործնական մեթոդը: Այս մեթոդի էությունը երեխաների գործնական գործունեության կազմակերպումն է, որն ուղղված է առարկաների կամ դրանց փոխարինողների հետ գործողությունների եղանակների յուրացմանը (նկարներ, գրաֆիկական նկարներ, մոդելներ և այլն):

Գործնական մեթոդի բնորոշ առանձնահատկությունները տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման ժամանակ:

տարբեր գործնական գործողությունների իրականացում,

- դիդակտիկ նյութի լայն օգտագործումը,
- ներկայացումների առաջացումը որպես դիդակտիկ նյութի գործնական գործողությունների արդյունք,
- հաշվի հմտությունների մշակում, չափում և հաշվարկում ամենատարրական ձևով,
- ձևավորված պատկերացումների և կենցաղում, խաղում, աշխատանքում յուրացված գործողությունների լայն կիրառում, այսինքն՝ գործունեության տարբեր ձևերում:

Այս մեթոդը ենթադրում է հաստուկ վարժությունների կազմակերպում, որոնք կարող են առաջարկվել առաջադրանքի ձևով, կազմակերպվել որպես ցուցադրական նյութով գործողություններ կամ ընթանալ բաժանվող դիդակտիկ նյութի հետ ինքնուրույն աշխատանքի ձևով:

Վարժությունները լինում են խմբակային -կատարվում են բոլոր երեխաների հետ կամ անհատական: Խմբակային վարժությունները, բացի գիտելիքների յուրացումից և ամրապնդումից, կարող են օգտագործվել վերահսկողության համար:

Անհատական վարժությունները կատարելով նույն գործառույթները, ծառայում են նաև որպես օրինակ, որի վրա երեխաները կողմնորոշվում են խմբակային գործունեության մեջ: Խաղի տարրերը ներառվում են բոլոր տարիքային խմբերի վարժություններում «կրտսեր» անակնկալ պահի, իմիտացիոն շարժումների, հեքիաթային բնույթի և այլն: Միջին տարիքային խմբում նրանք ձեռք են բերում որոնման բնույթ, մրցույթներ:

Երեխաների ակտիվության, ինքնուրույնության, կատարման գործընթացում ստեղծագործական դրսևորման տեսանկյունից կարելի է առանձնացնել վերարտադրողական (նմանակող) և արդյունավետ վարժություններ:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման բոլոր դիդակտիկ խաղերը բաժանված են մի քանի խմբերի:

1. Թվի մասին պատկերացումների զարգացման խաղեր
2. Ժամանակի ճանապարհորդության խաղեր
3. Տարածության մեջ կողմնորոշման խաղեր
4. Խաղեր երկրաչափական գործիչների հետ
5. Տրամաբանական մտածողության խաղեր

«Տարրական» մաթեմատիկական պատկերացումների ձևավորման տեսողական և բանավոր մեթոդները ինքնուրույն չեն, դրանք համապատասխանում են գործնական և խաղային մեթոդներին:

2.2 Մաթեմատիկական պատկերացումների ձևավորման մեթոդներ

1. Ցուցադրումը ուսուցման հիմնական նյութերից է, այն կրում է տեսողական-գործնական բնույթ, կատարվում է տարբեր դիդակտիկ միջոցների ներգրավմամբ, հնարավորություն է տալիս ձևավորել երեխաների հմտություններն ու մտածողության զարգացումը: Դրան ներկայացվում են հետևյալ պահանջները:

- գործողության մեթոդների ցուցադրման հստակություն, մասնատվածություն,
- բանավոր բացատրությունների հետ գործողությունների համաձայնեցումը;
- ցուցադրությանը ուղեկցող խոսքի ճշգրտությունը, կարճությունն ու արտահայտչականությունը:
- երեխաների ընկալման, մտածողության և խոսքի ակտիվացում:

2. Հրահանգ. Հրահանգներով ինքնուրույն վարժություններ կատարել: Հրահանգներում արտացոլվում է, թե ի՞նչ և ինչպե՞ս պետք է անել, որպեսզի ստանալ անհրաժեշտ արդյունքը. Միջին խմբերում հրահանգը տրվում է ամբողջությամբ, նախքան առաջադրանքը սկսելը:

3. Պարզաբանումներ, ցուցումներ: Այս բառապաշարը օգտագործվում է ուսուցչի կողմից, երբ ցուցադրվում է գործողության եղանակը կամ երեխաների հանձնարարությունը կատարելու ընթացքում, սխալները կանխելու, դժվարությունները հաղթահարելու և այլն: Դրանք պետք է լինեն կոնկրետ, կարճ և փոխաբերական:

Ցուցադրումը տեղին է բոլոր տարիքային խմբերում նոր գործողությունների (հավելված, չափում) ծանոթանալիս, բայց միաժամանակ անհրաժեշտ է մտավոր գործունեության ակտիվացումը, որը բացառում է ուղղակի ընդօրինակումը:

Գործողության յուրացումը և կատարելագործումը իրականացվում է բանավոր մեթոդների ազդեցության ներքո՝ բացատրություններ, ցուցումներ, հարցեր:

2.3 Մաթեմատիկական պատկերացումների ձևավորումը գործունեության բոլոր ձևերում

Երեխաների մաթեմատիկայի ուսուցման խնդիրը հետաքրքրել է գիտնականներին դարեր շարունակ: Նախադպրոցական տարիքի երեխաների մաթեմատիկայի ուսուցումը պարտադիր է: Երեխայի զարգացումը պետք է սկսել պարզագույն տարրերից և հետո ամբողջացնել: Հետաքրքրասիրությունը հաճախ պայմանավորված է աճող դժվարություններով, ոչ ստանդարտ խաղով, դրված խնդրի լուծման անհրաժեշտությունով: Դաստիարակները խաղի ժամանակ մոդելավորում են այնպիսի տրամաբանական և մաթեմատիկական կառույցներ, որոնք օգնում են երեխաների մոտ տրամաբանության և մտածելու համակարգը ավելի արագ զարգացնել: Խաղի ժամանակ ստեղծում են բարենպաստ պայմաններ երեխաների համար գիտելիքները կիրառելու համար, նրանց ակտիվ և ինքնուրույն աշխատելու համար: Երեխաների մաթեմատիկա ուսուցանելն անհիմաստ է, եթե չօգտագործվեն զվարճալի խաղեր, խնդիրներ:²

² <http://www.samouchka.com>

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԴԱՍ-ՊԱՐԱՊՄՈՒՆՔ

Թեման՝ Ծանոթացում 3 թվին և թվանշանին

Նպատակը՝

- Ձևավորել պատկերացումներ 3 թվի և թվանշանի մասին, ծանոթացնել դրանց ճիշտ թվարկման ճիշտ հերթականությանը: Սովորեցնել տարբերել 1 և 2, 2 և 3 առարկաներից բաղկացած խմբերը համեմատական և հաշվողական եղանակով
- Բացահայտել թվերի միջև գոյություն ունեցող քանակական կապը (2-ը շատ է, քան 1-ը, 2-ը քիչ է քան 3-ը)
- Զարգացնել նկարների տրամաբանական հաջորդականությունը հասկանալու և պատմելու հմտությունը

Անհրաժեշտ պարագաներ

Ցուցադրական 1-3 թվանշանները պատկերող քարտեր, 3-ական ոգնի և խնձոր:

Նախապատրաստական մաս

Օդափոխել խմբասենյակը, աթոռները դասավորել սեղանների դիմաց, երեխաների ուշադրությունը կենտրոնացնելուց հետո հարցնել.

Ընթացքը

Խթանման փուլ

Ի՞նչ պարապմունք է այսօր մեզ մոտ:

1. Ո՞վքեր կմոտենան դասավորեն իմ դիմաց դրված թվերը ըստ կարգի:
2. Ո՞վ կարտասանի 1 թվանշանի ոտանավորը:
3. Իսկ ո՞վ կարտասանի 2 թվանշանի ոտանավորը:
4. Ո՞վ կմոտենա և կկատարի ուղիղ համբանք 1-3 ը:

Մեկը նման է այլոնի

Երկուսը ոտքը ծալել

Ծիծաղելի տեսք ունի

Գլուխն առաջ է թեքել

Կանգնած է ցից, իսկ գլխին

Նազանքով վիզն է ճռճում,

Եռանկյունի իր կեպին (1)

Ինչպես կարապը լճում: (2)

Այնուհետև երեխաների ուշադրությունը հրավիրել ցուցատախտակին՝ երեխաներին առաջարկել մոտենալ և այդտեղ փակցնել 1 այնուհետև ևս 1 ոգնի:

Իմաստի քննալման փուլ

Որքա՞ն ոզնի փակցրեցիք գրատախտակին:

Առաջարկել հաշվել պարզել, թե որքան ոզնի կա փակցված (հետևել, որ ընդհանուր թիվն անվանեն առարկայի անվան հետ 1, 2 ընդամենը՝ 2 ոզնի): Ապա երեխաներին հարցնել ի՞նչ են սիրում ոզնիները ստանալով պատասխանը՝ խնձոր, առաջարկել երեխաներին փակցնել ոզնիների կողքին այնքան խնձոր, որքան որ ոզնիներն են՝ յուրաքանչյուրին մեկ խնձոր հյուրասիրել: Այնուհետև հարցնել ոզնիներն են շատ, թե՞ խնձորները: Երեխաները պատասխանում են, որ ոզնիները և խնձորները հավասար են՝ երկու ոզնի, երկու խնձոր: Երկու ոզնիների կողքին առաջարկել փակցնել ևս մեկ ոզնի, առաջարկել միայն հաշվել՝ 1, 2, 3, ընդամենը՝ 3 ոզնի: Առաջարկել կատարել համեմատում, ո՞րն է շատ (3 ոզնին, թե՞ 2 խնձորը):

-Ո՞ր թիվն է փոքր՝ 2-ը թե՞ 3-ը: Ասել, որ սա 3 թվանշանն է, այն թվային շարքում իր տեղն ունի, կանգնում է 2-ից հետո: Այնուհետև հավասարեցնել խնձորների և ոզնիների թիվը և հարցնել երեխաներին: Հիմա ոզնիներն ու խնձորները որքա՞ն են (3): Ինչպե՞ս ստացվեց երեք խնձոր (2 խնձորին ավելացրինք 1 խնձոր):



Պարապմունքի ժամանակ դաստիարակը հետևում է, որ բոլոր երեխաներն ընդգրկված լինեն պրոցեսին, ակտիվ մասնակցություն ցուցաբերեք և պատասխանեն հարցերին, որպեսզի չձանձրանան և չհոգնեն: Այդ նույն նպատակով պարապմունքի ընթացքում կատարվում է նաև ֆիզկուլտ դադար, որպեսզի երեխաները թարմանան և կենտրոնանան: Այն իրականացվում է տարբեր վարժությունների օգնությամբ:

Ֆիզկուլտ դադար

Մենք հաշվեցինք հոգնեցինք
Ելանք ոտքի կանգնեցինք,
Երկու ձեռքով ծափ տվինք,
Երկու ոտքով ցատկեցինք,
Ձեռքերը վեր ձգեցինք,

Ուսերը լայն բացեցինք,
1, 2, 3 հավասար շնչեցինք,
Մարզվելով ուժեղացանք
Կամաց կամաց ամրացանք:

Ամփոփել՝ ասելով

- Երեք թիվը մեծ է երկուսից, դրա համար էլ երեք թվանշանը կդնենք 2-ից հետո (ցույց տալ 3 թվանշանը):

Կատարել ուղիղ համրանք 1, 2, 3: Հաշվել խմբով, ապա թվարկել առարկաներ, որոնք միշտ լինում են 3-ական՝ եռագույնը, երեքնուկ ծաղիկը, լուսանշանի աչուկները:

Առաջարկել հանելով 3 թվանշանի զվարճալի ընկերոջ մասին՝

Ո՛չ լսում է, ոչ խոսում, ո՛չ էլ տեսնում,

Սակայն բոլորիս ճանապարհ է տալիս (Լուսակիր)

Պարապմունքի այս մասում ընթերցել 3 թվանշանի ոտանավորը

Երեքն էլ մի օղակ էր,

Տեսեք ո՞նց են սղոցել,

Երկու կեսն էլ ահա,

Դրել են իրար վրա:

Այնուհետև ասել, որ բոլոր թվերն էլ շա՛տ կարևոր են, յուրաքանչյուր թիվ իր տեղն ունի թվային շարքում, որ հերթականությունը չի կարելի խախտել: Կատարել ուղիղ և հետընթաց համրանք 1-3-ը:

Դիդակտիկ խաղ «Գորգ»

Դաստիարակ – Երեխաներ, եկեք հիշենք երկրաչափական պատկերները և միասին պատրաստենք մի գեղեցիկ գորգ այդ պատկերներով:

Երեխաները վերցնում են նախապես կտրած երկրաչափական պատկերները, անվանում դրանց գույնը և անունը և դաստիարակի ցուցումով փակցնում ավելի մեծ չափի թղթի վրա:

Առաջադրանք՝

- Դասավորել թղթի կետնտրոնում՝ շրջան
- Աջ անկյունում՝ քառակուսի
- Չափս վերևի անկյունում՝ եռանկյունի
- Ներքևի աջ անկյունում՝ քառակուսի
- Շրջանից դեպի ձախ՝ ուղղանկյունի
- Վերևի ձախ անկյունում՝ ձվածիր (օվալ)

- Շրջանից ներքև՝ շեղանկյուն
- Ստորին ձախ անկյունում՝ կիսաշրջան

Ստացվեց գեղեցիկ գորգ՝ բոլորի աշխատանքի արդյունքում:

Խաղ՝ Կռահում

Խնդիր՝ Մայրիկը խանութից գնեց տոնաձառի երեք խաղալիք, երեքն էլ գնեց հայրիկը:

Միասին քանի՞ խաղալիք գնեցին հայրիկն ու մայրիկը:

- Իսկ հիմա կատարեք գործողություն, անհատական քարտերի վրա. $3+3=6$

Առաջադրանք – Երեք փուչիկներ վերև թռան, երեխաները ուրախացան, երբ մեկ փուչիկը պայթեց օդում, քանի՞ փուչիկ մնաց երկնքում:

Երեխաների պատասխան...

Դաստիարակ - Հիմա կատարում են գործողություն անհատական քարտերի վրա
 $3-1=2$

Ֆիզկուլտ դադար.

– Եկե՛ք ծափ տանք գլխից վերև՝ 1, 2, 3,

Երեք ծափ էլ առջևում՝ 1, 2, 3,

Նույնքան ծափ էլ ներքևում՝ 1, 2, 3:

Ծափիկները արագացնենք,

Անձրևի կաթիլ դարձնենք:

Կշռադաստման փուլ

Դադարից հետո դաստիարակն անցնում է ընդհանուր պարապմունքի ամփոփմանը:

Նյութն ամրապնդելու համար տալիս է հետևյալ հարցերը.

1. Ո՞ր թվանշանի հետ ծանոթացանք այսօր:
2. Ի՞նչ ոտանավոր սովորեցինք:
3. Ի՞նչ կպատմեք տանը այսօրվա մեր պարապմունքից:

Հարցադրումներից հետո դաստիարակը մի քանի պարզ խնդիրներ է առաջադրում երեխաներին՝ ստուգելու, թե որքանով են նրանք յուրացրել նոր ուսուցանված նյութը:

Խնդիր 1

– Դու ինձ ցո՛ւյց տուր մեկ մատիտ,

Ես էլ քեզ՝ երկու մատիտ,

Եթե շարենք կողք կողքի,

Քանի՞ մատիտ կստացվի:

– Կստացվի երեք մատիտ:

Խնդիր 2

– Գյուղում կար երեք ձի,

Նրանցից երկուսը տարան մրցույթի:

Քանի՞ ձի մնաց գյուղում:

– Գյուղում մնաց մեկ ձի:

Խնդիր 3

– Կանաչ բացատում,

Երկու նապաստակներ էին ցատկոտում,

Նրանց մեկն էլ միացավ,

Քանի՞ նապաստակ դարձավ:

– Դարձավ երեք նապաստակ:

Տնօրենը և մանկավարժը դիտելով պարապմունքը միջին տարիքային խմբում, եկան հետևյալ եզրակացության, որ երեխաներն ունեն բավականին գիտելիքներ թվերի քանակական հարաբերության մասին: Տրամաբանական ճշգրիտ պատկերացումներ ունեն թվերի հաջորդականության, ուղիղ և հետընթաց համրանքի վերաբերյալ: Հաշվողական կարողությունների զարգացմանն ուղղված պարապմունքի ընթացքում բոլորը ակտիվ էին և սիրով մասնակցում էին ընթացքին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հետազոտության ընթացքում կարևորեցինք երեխաների մեջ ճանաչողական և համադարկան կարողությունների ձևավորումն ու զարգացումը:

Պարապմունքի ավարտին հասանք մեր առջև դրված նպատակներին, այն է՝ բացահայտել տարրական մաթեմատիկական պատկերացումների զարգացումը նախադպրոցական տարիքում:

Արդյունքում հանգեցինք այն եզրակացությանը, որ

- Աշխատանքները ուղղված էին հաշվողական, վերլուծական, համադրական կարողությունների զարգացմանը:
- Երեխաները իրենց զգում էին շատ լավ, բավարարված, նրանց համար հետաքրքիր էր դաս-պարապմունքը խաղի տարրով:
- Ընտրված թեման անշուշտ կարևոր է ներկայիս նախադպրոցական կրթության մեջ, քանզի երեխաների հաշվողական կարողությունների և հմտությունների վրա է հիմնված նրանց հետագա ողջ ուսումնառությունը:

Նախադպրոցական տարիքը ամենակարևոր շրջանն է անձի կայացման և զարգացման համար, այն կախված է երեխային շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից, դրանք են ընտանիք, մանկապարտեզ, ընկերներ: Նախադպրոցական տարիքում երեխան արդեն ունակ է ճանաչելու առարկաների նմանությունը և տարբերությունը, ելնելով նրանց առանձնահատկություններից: Նախակրթարանում պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կզարգանան նախադպրոցականի դեռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշները՝ ինքնուրույնություն, ինչ-որ նոր բան սովորելու հակում, հետաքրքրասիրություն: Աշխատանքի հիմնական նպատակն է նախադպրոցական տարիքի երեխաների մոտ զարգացնել երեխայի մաթեմատիկական ունակությունները, ինքնուրույնությունը, տրամաբանությունը, ամրապնդել երեխայի հիշողությունը, կատարելագործել երևակայությունը: Այս ամենը իրագործելու ամենարդյունավետ ձևը խաղն է, խաղի ժամանակ անհրաժեշտ է, որ դաստիարակը կատարի խաղընկերոջ դերը:

Այդ տարիքում յուրաքանչյուր երեխա իր չափով է ներգրավվում գործընթացի մեջ: Յուրաքանչյուրի մոտ մաթեմատիկական պատկերացումներն առանձնանում են իրենց առանձնահատկություններով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հետաքրքրաշարժ խաղեր ձեր երեխաների համար «Իմ ընտանիքը» 2007թ., Ե.Գ. Մ. Բերսենևա, էջ 25-27:
2. Ա. Զ. Կալմանովիչ «Երեխաները և մաթեմատիկան», էջ 54-55:
3. Մանկապարտեզի միջին խմբի (4-5 տարեկանների) կրթական համալիր ծրագիր, էջ 5-7, էր 15, 16:
4. «Դպիր»- «ՄԽ. Սեբաստացի» կրթահամալիրի մանկավարժական հանդես
5. Ա. Դալլաքյան, Ս. Ա. Մարույան «Նախադպրոցական մանկավարժություն» Երևան 2008թ.
6. Ծննդից միչև վեց տարեկան զարգացման և կրթական չափորոշիչներ. Երևան 2018
7. Ա. Արնուդյան, Բեդերյան «Տանը և դպրոցում». Երևան 2008
8. «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես

Համացանց

1. <http://www.deti7ya.ru/>
2. <http://www.samouchka.com>
3. <http://www.imdayak.am>